ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. օգոստոսի 2-ին, թիվ 83-Ա
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ Վ. ԲԱԶՄԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱՇԵՍ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2011 թվականի հունիսի 30-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011թվականի մարտի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում 2011 թվականին հողաշինության և հողօգտագործման բնագավառում տեսչական ստուգումներ իրականացնելու մասին>> թիվ 35-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցի համաձայն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին - մարզային հողային պետական տեսչությունը իրականացրել է տեսչական ստուգումներ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վ. Բազմաբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքում առկա 19.93 հա համայնքային սեփականություն հանդիսացող խոտհարքները ապօրինաբար (առանց հողամասի օգտագործման կարգը պահպանելու) օգտագործվում են համայնքի բնակիչների կողմից: Համայնքի ղեկավարին՝ բազմիցս անգամ զգուշացվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ համայնքում հողերի օգտագործումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրականացնելու համար, սակայն Վ. Բազմաբերդ համայնքի ղեկավար Արտաշես Սաֆարյանը չի իրականացրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունները, այսինքն՝ չի կանխարգել, չի կասեցրել և չի վերացրել համայնքային սեփականություն հանդիսացող 19.93 հա խոտհարքի ապօրինի հողօգտագործումը, հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ չի կիրառել վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններին չի ներկայացրել հաղորդումներ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 244.9, 56.1-րդ հոդվածի 2 –րդ մասով և 281-283-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վ. Բազմաբերդ համայնքի ղեկավար Արտաշես Սաֆարյանի նկատմամբ նշանակել տուգանք մեկ հարյուր հազար դրամ, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005242921:
2. Սույն որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Վ. Բազմաբերդ համայնքի ղեկավար Արտաշես Սաֆարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վ. Բազմաբերդ համայնքի ղեկավար Արտաշես Սաֆարյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ